**ՄՈՐ ԵՎ ՄԱՆԿԱՆ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ**
**ÖSTERREICHISCHES MUTTER KIND ZENTRUM**

03.02.2015թ.
ք. Գյումրի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի
հնարավոր մասնակիցների ղեկավարներին

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և կազմակերպությունների միջև կնքված N ՇՀԱՊՁԲ-11/15 գնման նախնական պայմանագրի և N 1 հավելվածում նշված չափաբաժնով նախատեսված ապրանքները:

Գնման առարկա է հանդիսանում <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի կարիքների համար քիմիական նյութերի ձեռքբերումը:

Սույն հրավերի ծանուցման ծածկագիրն է՝ ***«ՇՄԳՄՄԱՀ- ՇՀԱՊՁԲ-11/15-15-1»:***

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ք.Գյումրի, Գ. Նժդեհի 5 հասցեով մինչև 2015թ. փետրվարի 11-ը, ժամը 10:00-ը:

Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերը գրանցամատյանում գրանցում է գնումների համակարգող՝ Նվարդ Բաղալյանը: Հայտերը գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, կազմակերպության անվանումը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ-ի շենքում, ք.Գյումրի, Գ. Նժդեհի 5 հասցե, նիստերի դահլիճում, 2015թ. փետրվարի 11-ին, ժամը 10:00-ին:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (**Հավելված N 5** ),ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն.

բ. Գնային առաջարկ (**Հավելված N 5.1** ): Յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/15 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Հայտ պարունակող ծրարը ներկայացվում է փակ վիճակում, սոսնձված, ստորագրված և կնքված այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են 1 բնօրինակից և 2 պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտի հետ միասին ներկայացվում է նաև վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ:

Եթե, հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7–րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը:

Գնման գործընթացը կազմակերպվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Առդիր՝ 23/քսաներեք/էջ:

<<Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոց>> ՓԲԸ տնօրեն ՝ Ա. Կուրղինյան

Կատ. Ն.Բադալյան
հեռ. 055 715100